

(441-ին), Սահմանագլխումն արդէն սկսուել էր ասպատակութիւնն ու աւարառութիւնը բայց մինչև երկու բանակների ընդհարումը խաղաղութեան դաշն կապուեցաւ։ Այդ դաշնիքում վճռուեցաւ ինչպէս ապարէն էր նախնի և յետագայ դաշնիքներում որ երկու տէրութիւններից ոչ մէկն էլ իրաւունք չունենայ նոր ամրութիւններ կառուցանելու սահմանագլխներում—Յաղկերտը ստիպուած էր մեծ կորու վարելու Նեփացաների ընդդէմ։ Սրանք քանի մի անգամ ջարդեցին Յաղկերտի զօրբը։ Սա ինքն այդ իսկ պատճառով երկար ժամանակ Խորասանում մնալ ստիպուեցաւ։

Հայոց մի մեծ ապստամբութիւն ևս որ գըլխաւորաբ իւր և ծերունի Միհր Ներսեհի քրիստոնէից դէմ տածած ատելութիւնից էր ծագել, շատ զրագեցրեց նրան (450 և 441)։ Պարսիկների և պարսկական կուսակցութեան Հայաստանում մեծամեծ ճիգերի շնորհեւ մրայն հնար եղաւ արքայից արքայի իշխանութիւնը վերականգնելու և այդ էլ քրիստոնէական կրօնին կատարեալ ազատութիւն շնորհելով մրայն։

Այս շեղուածութեան։

Ե. Քարամեան



Մովսէս Կաղանկատուացոյ Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյն մատունաղարանում զանուած ծնուազիւ օրինակները։

(Ծրկորող և ուռումք)։

Ա 632

Ա. Ճ. 1 = 1664

Անոն. Պատմութիւն Աղուանից Նոհիթ. Թղթեայ և մշջ. Ստուարաթթիթ երեսը լաթածածք, մէջքը կաշեպատ: ՀԱՆԳԱՎԱՆՆՔ. Խնամքով պահուած, անթերի: Անքէց 265 թ. և 264 թութեց: Սնծունթորին 17×14 սմ. Թղթիթք 264: Գրութիթին. Երկսին 5×15 սմ. Գիր. Բոլորազիր: ՏՈՒ.Ք. 25 իւրաքանչեւ սինակում: ՎԵՐՆԱԳԻՐՔ. Մինչեւ 22 թութեց կարմիր թանարով իսկ շարունակութիւնը սեւ: Սկզբնատար կարմիր երկանազրով: ՄՏԱԾՈՂ ՏԾՐ Բարսեղ արքավիշտուպոն առաջնորդ Ամարասայ վանից: ՏԾՂ Ամարասու և չիթերու սր. Գրիգորիսի վանորայց: ԺԱՄԱՆԱԿ ՌԵԴԴԻ=1664: ՎԱՐՄԱՆՆԱ Պետրոս կաթուուկուսին Աղուանից:

ՏԵՊԵԱԽԹԻՒՆՔ ԵԽ ՑԻՇԱՏԱԿԱԿՐՈՒԹԻՒՆՔ։

Թ. 1^ա.

Եյս երեսին կպցրած մի մագաղաթեայ բուլորազիր տախտակ օրացոյց, որի նկարագիրն է՝ 11, 10/, 9/, 8/ և 7 սմ: տրամագիծ ունեցող հինգ համակեդրոն շրջանագծի կպցրած իւրաք և երկո-

4. Վարշանանց կամ առաջն կրօնական պատերազմն է անարկուած։ Ժան. Թ.

տասան շառաւիզներով համահաւասար բաժանած 12 հաւասար մասերի։ Առաջն մեծ շրջանակում գրուած են հռովմէական ամիսների անուններ գողիակոսի (կինդամակերպի) աստեղատանց 12 նրաններով։ Երկրորդ շրջանակում գրուած են կինդամակերպների անուններ զօր կցյալ, կշիռ, կարիճ ևն, Երրորդում ամիսների երայական անուններ, Ագար, Ափան ևն։ Եորրորդում հայոց այրուելնը երկու կարգ, աջ ու ձախ իւրաքանչիւր հատուածում վեց գիր՝ ուստի և իւրաքանչիւր կիսաշրջանում բոլոր 36 տառերը։ Հինգերորդում աստղաշաշական նշանագրեր իւրաքանչիւր հատուածում երեք գիր։ Սոյն մագաղաթի և նորա վրայի շրջանակի կեղրոնից կաթած և տատանի հետ միացրած են և երկու փոքրազիր շրջանաձև մագաղաթեայ կտորներ, որից մեծագոյն կտորը ունի 6/, սմ: տրամագիծ, որի վերայ 5 սմ: տրամագիծ ունեցող մի շրջանակ կայ 30 համահաւասար բաժանումներով որոնց մէջ էլ արարական թթվական թուանշաններ 1—30։ Եյս շրջանակի մէջ էլ 4 սմ: տրամագծով կարմիր ներկած մի դատարկ շրջանակ կայ, որի կէս տրամագծի մեծութեամբ մի նոր լուսնաձև շրջանակ 11 աստղանիշներով (աստղալից երկինք): Խսկ փոքրազոյն մագաղաթիկը 5 սմ: տրամագիծ ունի և նյոյ կեղրոնից կարած է, այս երրորդ մագաղաթէ շրջանակի մէջ կտրուած է 2 սմ: տրամագծով մի շրջանակ, որ ծածկում է երկրորդ շրջանակի վրայի աստեղազարդ շրջանակը։ Խսկ շրջանակի վեցի հակագիր կողմից կտրուած է մի փոքրը, որով տակի շրջանակի ամսաթիւն երեսում է, Սոյն երկու կտոր մագաղաթները մեծի հետ համակեդրոն լինելով միջնավայրում միացած են իւրաք հետ թելով։ Երկուքն էլ ունին ցուցականջներ, մինի երկարութիւնը 2 սմ: միւսին 1։ Փոքրինը կիսով չափ կտրուած։ Միջնակի մագաղաթի ականջը ցուցամատի պէս պատուում է ամիսների և կենդաների երկուտասան անունները ցցց տալով, իսկ փոքրիկնը միայն ամսաթուերի համարները։ Սոյն տախտակ օրացոյցի միւս երեսին գրուած է սովորական նոր բոլորազրով և նոր (?) սև թանաքով, «ԹՎ. ՌԵԴԴԻ» յիշատակ է Պետրոս կաթուղիկոսին Աշուանից։ Եյս երեսի վրայ կան նաև մի քանի կիսաշնջուած հայերէն և սևերէն ստորագրութիւններ։

Թ. 1^բ.

Սոյն երեսին գրուած են շարական երգողաց անունները։

—«Թուականք» Քի. և Հայոց։ Քրիստ.	Հայոց
Ա. Խսահակ Հայրապետն	Կ. Ժ. Թ.
Բ. Մեսրոր Վարդապետն	Կ. Կ. Բ.
Գ. Յոհան Մանդակունին	Կ. Զ. Լ.

— «Թուականք՝ Քի. և Հայոց՝ Քրիստ.	Հայոց
Դ. Խոսէս Խորենացին և Քերթօղ	ՆՊ. Գ.
Ե. Անանիա Շիրակացին	ՇԾ. Պ.
Զ. Կոմիտաս յարագածունէ	ՈՒԹ.
Է. Գրիգոր Մագիստրոսն	ՈԼ. Գ.
Ը. Սահմակ Հայրապետ Զօրոփարեցի ՈՉԱ	ՃԻ. Ը.
Թ. Յօհան Օձնեցին	ՃԺ. Ը.
Ժ. Ստեփանոս Սիւնեցի	«
ԺԱ. Պետրոս Գետագարձն	ՈՒԺ. Ը.
ԺԲ. Ներսէս Կլայեցին	ՈՒԿ. Ը.
ԺԳ. Ներսէս Լամբրոնացին	«
ԺԴ. Վարդան Վարդապետն	«
ԺԵ. Գրիգոր Վկայականի փաքրն ՈՒԾ. Ը.	ՈՒԵ.
ԺԶ. Յակով Կլայեցին	ՈՒՄ. Ը.
ԺԷ. Յօհաննէս Պլուզն	ՈՒՑ. Ը.

Սորոց երգեցողը շարականացն համօրէն, որոց մաղթանօքն Տէր Քրիստոս Աստուած մեջ ողորմեցի ամէն:

Թ. 2 ր.

«(3)անկ և նախագրութիւն սակա պատմութեան աղուանից»:

Թ. 4 ր.

«Այս առաջին ցանկ պատմագրոյս, թուով 1. և ցուցումն կարգի սորա, զոր դիւրագիւտ լինի ընթերցողաց զորս և կամիցին ինչզել կարգաւ զիտ և դաշխատող սորա յիշեաւ»:

Թ. 66. ր.

«Կատարեցան զիլք յառաջին պատմութեանց աղուանից, Երկրորդ պատմութեան արևելեացս աղուանից նահանդիս»:

Թ. 195 ր.

«Կատարեցաւ շարած երկրորդ միջակ պատմութեան աղուանից»: «Երրորդ ցանցք պատմութեան աղուանից»:

Առաջին խմբի Մայր օրինակը վերջանում է «ԻՊ. անուանք հայրապետաց աղուանից, ամք և գործք նոցին»: Իսկ

Երկրորդ խմբի օրինակը աւելացնում է և

Թ. 196 ր.

«Ի՞» վասն կոտորածին, որ ի կողմանս Խաչենոյ, և վասն բարեպաշտ իշխանին ջալալին: ԻԶ. վասն Եկեղեցոյն զոր շինեաց մեծ իշխանն ջալալ դոլա հասանն: ԻԵ: վասն մահուան բարեպաշտ իշխանին ջալալ դոլա հասանոյն:

ԻԲ. «վասն մահուան իշխանին Շահնշահի, և որդոյ նորին Զաքարէին»:

Թ. 241 «Պատմութիւն յաղագս սրբոյ խաչին, որ հացունեացն կոչի: Խւ թէ որպէս դարձաւ ի պարսից աշխարհէն խաչն աստուածընկալ, Խւ յայնժամ մասն ինչ ընկալեալ տիկնոցն Սիւնեաց:»

Թ. 259 ր.

«Արդ՝ աղաչեմ զամեննեան. հարք և եղբարք

և սրբամաքուր սուրբ հայրապետք, որ բնակեալդ էք ի գուռն Ամարասա. որբ կարգաք և կամ աւրինակէք՝ պաղատանօք սրտի յերեսս անկետ առ ոսս ձեր յիշման արժանի արարէք զիս զրազմամելդ գրիշը և գծող սորա զանարժան և զղարիսպացեալ սուտանուն ապաշխարող և զնուողն իմ բատ մարմնոյ և զեղբարքըն իմ հարտղատք և զամենայն ազգային իմ: և զայնոսիկ ոյք յանձնեցին յիշատակել յաղօթս: և տէր Աստուած յիշողացդ և յիշելոցս առ հասարակ ողորմեսցի ի միւս անգամ՝ գալստեանն ամէն: Ով եղբարք, ևս չունիմ յիշման տեղիք, բայց թէ սակաւ մի յիշման արժան առնէք, վարձս ի Քրիստոսէ առնուցուք և զԱստուած ողորմին ընդ հայր մեղպին կցորդեալ ասէ՝ հայրն Աստուած զնա անտես չառնէ: Ամէն:

Յիշատակարանիս մելանը և զրիչը փոքր ինչ տարբեր գլումէ ձեռագրի գրչութիւնից, որ և խոստավանվումումէ յիշատակագիր գրողը յիշատակարանի վերջում:

Թ. 259 ր.

ՄԵԾ յիշատակարանը «Փառք եղակամ տէրութեան և եռորշ անձնաւորութեան, հօր անսկրզբան, որդւոյ անեղբի. և հօգւոյն սրբոյ անհատ բղանողի այժմ և անդրաւ յաւիտենիւ ամէն:

Ծնորհօք ամենազօրին Աստուծոյ եղեւ կատարումն այսմ լուսարդ և ներբողունակ մատենիս ի շրջաբերութեան թուականիս Հայազնի ի. Ա. ի. Ճ. ի. Փ. և յ. Գ. ամին: Ի հայրապետութեան աշխարհիս աղուանիցից տեառն Պետրոսի երջանկափառ կաթողիկոսի վերապիտողի մեծի աթօռոյն գանձասարայ. զի այս խոհեմարան հայրապետու աշակերտ էր սրբափայլ և ուղիւածիմ մեծ բարունապետին Ղուկասու, վասն զի այս երիցս երանեալ կաթողիկոս լուսաւորեաց վիստարեալ և զնսեմացեալ բոլոր տունս Աղուանից: զոր ի բազում ամանակաց կայր խախտեալ և խանգարեալ ի կարգաց և ի կրօնից վանորայք և յամենայն եկեղեցիք: Յորոց մի էր և մեծ աթօռս Ամարաս զի ժամանակաց յոլովից կայր աւեր և անընակ ի մարդկանէ զի արք ոմանք Խէնէշք և անխոհեմք փեռեկտեալ և խրամատեալ էին զմեմ և զիմնակ սորին և արարեալ իւրեանց բնակութիւնը յայլ և այլ վայրոց ըստ անձնեւր կամաց, Խակ այս խոհեմարան կաթողիկոս Պետրոս եկեալ ժողովեաց ի մի զժեմ և զիմնակ երկրիս հարանդ կոչեցեալ, զոր այժմ ասի վարանդա, և կացոյց զառաջնորդ զհարազատ և զմիջածին զաշակերտն իւր զպարոն տէր Քարսէղն որ է ստացօղ տառիս. և սա նորոգեաց զամարաս պարսպօք և բազմածախ սենեկօք և տամբք ի փառս արարչին և ընտրելոցն իւրց սրբոյն Գրիգորի ամէն, Տիրնա կայր և հովարան ի հնոց մէծի

աթոռոյս, հուզ ի գեղջն Հերհէր կոչեցեալ որ կոշիր սուրբ Աստուածածնի վանք, նա ևս էր անրնահացեալ, այլ և անդ գնացեալ մնձ հայրապետն հիմնարկէ զեկեղեցի և յանձնէ աշակերտին իւրոյ ըզվերոյգրեալ Բարսեղ պարոն տերին, զի շինեսցէ, զորե կատարեաց իսկ, կամարակապ ձեռով և գեղեցկանկար դրամիք ըստ ձեռնտուութեան ժամանակին, որ վերաձայնի սուրբ Գրիգորիս, որ և անդ զարդարեաց պարսպօք և խցերօք կամքը և օժանդակութեամբ վերոյ ասացեալ հոգեւոր հօրն իւրոյ, Դարձեալ ետքել յոլով գրեանս յորոց մինն է և զայս պատմագիրք զոր ի վաղուց հետէ սպառեալ էր ի տանէս Ըղուանից և գտեալ եղալ ի ձեռն լուսաւոր հոգի Դուկաս վարդապետին, զոր ետ վերստին զրել և օրինակել վերոյգրեալ հայրապետու. իսկ սորա տեսեալ բազում փափականօք զրել հրամայեաց և ետ վախմը երկակի ամժոռոց սուրբ Ամարասա և Կորաչէն սուրբ Գրիգորիսի վանուցն. սուելով եթէ որ հանել ջանայցէ ի դրանէ երկուց Ամժոռոցս կամ կարեսցէ զյիշատակարանս, հանցի զայնպիսին ի քրամատէն կենաց և կտրեսցի ընդ մէջ և զրամին նորա ընդ կեղծաւորս դիցի ամէն:

Արդ, ով դաք Ըստ Երամից, յորժամ հանդիպիք սմա կարգալով կամ դաղափարելով, յիշեցէր ի սուրբ աղօթս ձեր զառաջնորդ սուրբ ուխտեացս կորովամիտ և հանձարապատում զտէր Բարսեղ արհի եպիկոպոսն, որ ստացող եղե զայս ներբողունակ մատենիս, որ է սեպհական յերկուս հարանդու, ի գեղշէն Կիշի կոշեցեալ ընդ սմին և միաբանք տեղոյս, զմարտիրոս զալէքսան, և զեղիս պարոն տեսաբըն, որք փոխեցան ի քրիստոս մերում ժամանակին, այլ և որք կան նարգեանս ի պաշտօն ուխտեացս. զովանէս պարոն տէրս, զտէր գրիգորս, զտէր մկրտիչս և զտէր ոսկանս և զայլ աշխատաւորս յիշել պարտիք ի քրիստոս ամէն:

Դարձեալ յիշեցէր կրկին անգամ զբարսեղ պարոն տէրն, և զարեան առու մերձաւորս զփոխեցեալսն ի Քրիստոս զմարտիրոս պարոն տէրն, զովանէս պարոն տէրն, որ մականուամբ չէկ կոչեւր, այլ և ձնողսն իւր զհայրն իւր աղան և զմայրն իւր գուլազն և հարազատ եղարքն զբաղտասարն և զմարտիրուն, նա և եղրօր որդիքն իւր զբասպարն. և զմազրուվանն, որ մանուկ տիքը փոխեցաւ ի Քրիստոս, Նյլէ քոքըն իւր զփերին, զիսանումն, զհիւրին, զմերէսան և զմամանն, և զայլ ամենայն ընտանիսն զկենդանիս և զհանգուցեալսն միահաղոյն յիշեցէր ի Քրիստոս միով հայր մեղայիւ և գուք յիշեալ մշեթ ի Քրիստոս յցան ամեննեցուն ամէն, Հայր...., ընդ որոց և զիս զսիմն լոկ անուամին բանի սորասաւորս յիշել ժամին որ զսակաւ յիշատակարանս

ծրեցի նաև թողութիւն շնորհէլ խոշորութեան գըրյս վասն զի յանպատշաճ ժամու և ի վերայ ծրնկաց իմոց մելանեցաւ, »

Թ. 262 թ.


Այլ գրչով անուանք հայրապետաց աղուանից և տէր Մարկոս այրն Աստուծոյ ԽՊ. » հասցրած մինչև ի.

Թ. 263 թ.

« Տէր իսրայէլ մեծկունէից որ այժմ վարէ ըզմողովուրդս ՌՄԾԲ. »

(Եարունակմթի)

Խ. Վ.



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՍԻՎԱՐԺԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԼԻՕՍՈՒԹԻՒՆ.

Պրոֆ. Մայերը (Gustav Meyer) Ասա գիտնական շարաթամեթերթի 9 և 10 համարներում Փոքր-Ասիսիի լեզուների վերաբերութեամբ մի ընդարձակ տեսութիւն է հրատարակում, ուր ի միջն այլոց և Հայոց լեզուի մասին հետեւեալ դիտողութիւններն է արել:

Փոիւգացիների հետ սերտ կապուած է և մի ժողովուրդ, որի բարձր հոգեկան ընդունակութիւնները և կենսունակ գործունէութեան ոյժերը ցոյց են տալիս, թէ նա մի ծանրակշիռ գեր է խաղալու Փաքր-Ասիսիայի ապագայ պատմութեան մէջ, Այն կարծիքը, որ իրը թէ Հայերը իրենց այժմեան ընակավայրում սկզբից իրեւ ընիկ ժողովուրդ են եղել, թէ նորա ընդունուում ուրեմն պարականին առանձնապես ցեղակից, այժմ՝ արգեն բոլորովին անտես է արուած, նոյնպէս, առաջ այն ընդհանրացած հայեացքը, որով հայոց լեզուն իրանական լեզուների մի ճիւղ էր ընդունուում ուրեմն պարականին առանձնապես ցեղակից, այժմ՝ արգեն կասկածելի է ցոյց տուած: Հայոց լեզուն բազմազան և փոփոխակի ճակատագրի դրաշմ է կրում: Նա արիական լեզուների հետ (նաև կելտականի ու մասամբ ալբանականի) մի օտարուսի պատկեր է տալիս: Պատմութեան հայրը (Հերոգոտ) Հայերի մասին ասել է, թէ նորա փափւացիների սերունդ են, և մենք մեր գիտութեամբ գորա գէմ առարկելու շատ բան չունինք: Նոցա լեզուն հիւսիսարևելեան եւրոպական լեզուների որոշ յատկութիւններն ունի և ակնյայտնի է, որ Փոքր-Ասիսիայի վերայով Բալկան թերակղզուց զաղմթելու ժամանակ իւր մէջ մեծ քանակութեամբ, մեզ համար այլ ևս անբացատրելի օտար տարր է ընդունել: Վերջապէս իւր վերջին բնակավայրում իւրացրել է հարաւային Կովկասի զարմանալի և օտարուսի հընչինը, այնպէս որ հայկական իւրաքանչչիւր բնադիր կարելի է նոյնպէս վիրական այրութենի նշաններով գրել: Հայոց լեզուն բաւական նոր ժամանակի, քրիստոնէութեան մուտքի հետ կապուած՝ գրականութեամբ է յայտնի: Յաճախ չին հայերէն կո-